Գործ թիվ ԵԴ/49161/02/22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

27.10.2022թ. **ք. Երևան**

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի /այսուհետ՝ Դատարան/ դատավոր Տ. Ստեփանյանս, ծանոթանալով <<Լեբրոն>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայցադիմումին և դրան կից ներկայացված փաստաթղթերին,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<<Լեբրոն>> ՍՊԸ-ն 19.10.2022թ. հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ <<Երևանի կենդանաբանական այգի>> ՀՈԱԿ-ի <<ԵՔԿԱ-ՀՄԱԱՊՁԲ-22/07>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի, երրորդ անձ՝ <<Երևանի կենդանաբանական այգի>> ՀՈԱԿ-ի՝ <<Երևանի կենդանաբանական այգի>> ՀՈԱԿ-ի՝ կարիքների համար մսեղիքի ձեռքբերման նպատակով կազմակերպված <<ԵՔԿԱ-ՀՄԱԱՊՁԲ-22/07>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.07.2022թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

24.10.2022թ. հայցադիմումը հանձնվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Տ. Ստեփանյանին:

Հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ և նույն օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածներով նախատեսված՝ հայցադիմումի ընդունումը մերժելու կամ հայցադիմումը վերադարձնելու հիմքեր չկան:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ, 199-րդ, 200-րդ հոդվածներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

<<Լեբրոն>> ՍՊԸ-ի ընդդեմ <<Երևանի կենդանաբանական այգի>> ՀՈԱԿ-ի <<ԵՔԿԱ-ՀՄԱԱՊՁԲ-22/07>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի, երրորդ անձ՝ <<Երևանի կենդանաբանական այգի>> ՀՈԱԿ-ի՝ <<Երևանի կենդանաբանական այգի>> ՀՈԱԿ-ի՝ կարիքների համար մսեղիքի ձեռքբերման նպատակով կազմակերպված <<ԵՔԿԱ-ՀՄԱԱՊՁԲ-22/07>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.07.2022թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից:

ԴԱՏԱՎՈՐ **Տ. ՍՏԵՓԱՆՅԱՆ**